ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հունվարի 31-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 63 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունչորս, աշխատանքի տեղավորման՝ քսանութ և շենքի վերելակի վերանորոգման մասին՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երեսունմեկին տրվել է դրական լուծում, երեքը գտնվում է ուսումնասիրման փուլում:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին մեկ դիմումի, քսանյոթ դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետ Վ. Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ուսումնասիրման ընթացքի մեջ է գտնվում շենքի վերելակի վերանորոգման մասին դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ